# Հ Ր Ա Մ Ա Ն   N 469-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«31» ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.                                        ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՆՈՆՆԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահի Վ. Հովսեփյանի 2018 թվականի  օգոստոսի 29-ի N ԵՆՊ-628/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Ն. Քամալյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. 2018 թվականի սեպտեմբերի 3-24-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Էրեբունի 1») նոտար Նոննա Քամալյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-56-րդ և 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Էրեբունի 2») նոտար Մարինե Սարգսյանին:

**ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

31.08.2018

X 

Artak Zeynalyan